պակությամբ ուշադրավ է և կարևոր։ Գեղարվեստական կատարման տեսակետից նույնպես վեպը հետաքրքրական է, չնայած այն չի հասցրած ավարտուն վիճակի։

Սեյրու արխիվում պահպանվում են մի շարք նյութեր, որոնք նա հավաքել է հայկական մեծ եղեռնի շրջանից, «Սով» վերնագրով մի նոր վեպ գրելու համար, կատարել է առանձին նշումներ, գրել է որոշ հատվածներ, սակայն նրա այդ և բազմաթիվ այլ մտահղացումները մնացել են անկատար, նրա վաղաժամ մահվան պատճառով։

Ինչպես ասվեց, այս հոդվածի նպատակը չէ տալ Սեյրու ստեղծագործության բնութագիրը, այլ մեր գրականագետների ուշադրությունը հրավիրել գրեթե մոռացության մատնված մի տաղանդավոր արձակագրի անտիպ ժեպերի վրա, որոնք արժանի են լուրջ ուշադրության և հրապարակության։

Լ Ր Ա Տ Ո Ւ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ 1905—1907 ԹԹ. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում սույն տարվա նոյեմբերի 18-ին և 19-ին տեղի ունեցավ Ակադեմիայի գիտական սեսիան, նվիրված 1905—1907 թթ. ռուսական առաջին ռևոլյուցիայի 50-ամյակին։

Սեսիան բաց արեց ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի փոխ-պրեզիդենտ Մ. Ներսիսյանը, որից հետո կարդացվեցին հետևյալ զեկուցումները. «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», զեկուցող՝ ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ծ. Ադայան, «Բոլշևիկյան հայ մամուլը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին», զեկուցող՝ պատմական գիտ. թեկնածու Ե. Խալեյան, «Ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցությունը Թյուրքիայի ռևոլյուցիոն շարժումների վրա», զեկուցող՝ պատմ. գիտ. թեկնածու Ե. Սարկիսով, «Ռուսական առաջին ռևոլյուցիան և հայ գրականությունը», զեկուցող՝ ֆիլոլ. գիտ. թեկնածու Ա. Ասատրյան, «Ցարական դրաքննությունը և հայ մամուլը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին», զեկուցող՝ ֆիլոլ. գիտ. թեկնածու Ս. Արեշյան։